

ետրը հետզհետէ երկրագործութեան և արուեստից մէջ անհոգանալով սաստիկ ինկաւ, և այս թշուառ վիճակէն զինքը բռնի ազատել փորձեց Բոմպայ: Յետոյ կրկին անգամ՝ 1801ին և 1806ին Անգղիացւոց համար իր նաւահանգիստները փակել ստիպուելով Գաղղիա Սպանիոյ հետ միաբանած զաղտնի դաշնադրութեամբ 'ի Ֆրոնդէնրպլոյ՝ զԲորդոզալ իրեք մաս բաժնեցին, որ ոչ երբեք գործադրուեցաւ. և երբ Գաղղիացիք երկիրը գրաւեցին՝ 1808ին յունիսամոյն մէջ Սպանիոյ հետ խօսքը մէկ ընելով և ձեռնտու գտնալով զԱնգղիա դարձեալ անկախութիւնը ստացաւ, բայց Անգղիացւոց զօրաւոր ազդեցութեանը տակ իյնալուն համար, և ինչուան 1820ին յոգնելով այդ ծառայութենէն և սպանիական ժամանակին անդր-ազատական յերափոխութենէն հրապուրուելով, բովանդակ Բորդոզալ ոտք ելաւ (24 օգոստ 1820): Այս շարժմանց ժամանակ Պրազիլ ալ բաժնուեցաւ, և թագաւորին որդին Տոն Բետրոյ հոն կայսր եղաւ: Յովհաննէս Չ.ի մահը, Տոն Բետրոյի՝ իր յաջորդին՝ նոր ազատական հրովարտակ մը հանելը և Բորդոզալի գահը իր զստերը Տոնա Մաբիամու թողուլը 1826ին նոր մաքառմանց պատճառ եղան. ոմանք նոր թագուհւոյն կողմը բռնեցին և ոմանք Տոն Միկէլի, որ 1824ին ինքզինքը թագաւոր անուանակոչեց, և գահը չթողուց՝ ինչուան որ Տոն Բետրոյ Պրազիլի թագէն հրաժարելով եկաւ իր աղջիկը թագաւորեցնելու. յետոյ Արմատականք կոչուածները Հրովարտակեանք կոչեալներուն հետ երկայն ատեն կռուելով, վերջապէս 1842ին Տոն Բետրոյի հրովարտակը հաստատեցին: Ամենայն կարգք և կանոնք սկսեր էին իրենց նախնական վիճակն առնուլ և կը զարգանար տէրութիւնը ֆոսդա-ֆոսպրալ

Թոմար կոմսին հողաբարձութեանը ժամանակ, որ 1838էն 'ի վեր պաշտօնեայ էր և նախագահ խորհրդոյ 1849էն 'ի վեր, երբ 1851ին Սալտանհա մարաջխտին գրգռութեամբը ծագած զինուորական խռովութիւն մը, 1826ին հրովարտակը բարեկարգելու պատրուակաւ որուն վրայ յաւելուած մը ըրած էր, ուզեց հին կուսակցութիւնները ոտք հանել. որոնցմէ թէ Արմատականք և թէ Հրովարտակեանք կոչուածները՝ հաւասարապէս մեծամեծ պաշտօններու վրայ ըլլալով, նեցուկ են և ամրութիւններկայ կառավարութեան:

Յիշողութեան տեսակ մը կայ զոր ժամանակաւ և սրտով կը ստանանք. յիշատակը սրացաւութեան հետ կապուած է: Ինչպէս լեռնային երկիրներու մէջ առաջին սեղագիծները աչքէ կը խուսափին, և բարձունք և հորիզոնք միայն ազէկ կը տեսնուին, այսպէս է նաև կենաց մէջ:

ԹԵՌՈՒԼՈՍ ՏԻՏՅՈՒՐ

Չարմանքն աւելի նրբամիտ է և նրբիմաստ՝ քան զատելութիւն:

Կրնանք մարդկանց վրայ լաւագոյն դատաստան ընել իրենց զարմանալի երեցած նիւթերէն, քան թէ անսիրելի սեպածներէն:

Գերագոյն մարդը գիտէ իր հակառակորդաց խօսքերը, և հակառակորդք իրենիմները չեն գիտեր:

ՀՆՆՐԻԿՈՍ ՊՈՒՇԷ

Ո՛վ որ յաջողութեան կը փափաքի՝ պէտք է առաւօտանց ժամը հինգին ելլէ:

Ո՛վ որ արդէն յաջողութեան մէջ է՝ կրնայ միայն ինչուան ժամը եօթը քնանալ:

Առածք Անգղիացւոց: